ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՀՀ ՍԱՀՄԱՆԸ ՀԱՏՈՂ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

Ուղևորային հայտարարագրում լրացված տեղեկությունները հաստատող փաստաթղթերի մասին

2024

Ուղեցույցի նպատակն է ներկայացնել ուղևորային հայտարարագրում լրացված տեղեկությունները հաստատող փաստաթղթերի մասին տեղեկատվությունը, որին անհրաժեշտ է

ԻՐԱՉԵԿ ԼԻՆԵԼ ԱՆՁՆԱԿԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԸ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵԼԻՍ

Ուշադրություն

Հայաստանի Հանրապետության սահմանով ֆիզիկական անձանց կողմից ապրանքների տեղափոխմանը վերաբերող կարգավորումներին ավելի մանրամասն կարող եք ծանոթանալ այցելելով ՀՀ Պետական եկամուտների կոմիտեի պաշտոնական կայքէջ՝
https://src.am/am/getMenusContents/266:

Հնարավոր է անցում կատարել նաև հետևյալ QR կոդով՝

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

1. Ֆիզիկական անձի կողմից լրացված ուղևորային մաքսային հայտարարագրի տեղեկությունները հաստատող ի՞նչպիսի փաստաթղթեր կարող են պահանջել մաքսային մարմինները.

Կախված հայտարարգրված տեղեկությունների բնույթից, ապրանքների մաքսային սահմանով տեղափոխման նպատակից կարող են պահանջվել հետևյալ փաստաթղթերը.

1) անձը հաստատող փաստաթղթերը, այդ թվում՝ անչափահաս անձի;

2) ֆիզիկական անձի կողմից հայտարարագրվող անձնական օգտագործման ապրանքների արժեքը հաստատող փաստաթղթերը;

3) ԵԱՏՄ մաքսային օրենսգրքին համապատասխան ֆիզիկական անձանց կողմից արգելքների և սահմանափակումների պահպանումը հաստատող փաստաթղթերը, եթե արգելքների ու սահմանափակումների պահպանումը ենթակա է հաստատման այդ փաստաթղթերով;

4) տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթերը;

5) մաքսատուրքերի, հարկերի վճարումից ազատմամբ ներմուծման պայմանների պահպանումը հաստատող փաստաթղթերը, (օրինակ՝ օտարերկրյա ֆիզիկական անձի Հայաստանի Հանրապետությունում մշտական բնակության տեղափոխված ճանաչվելու փաստը հաստատող կամ օտարերկրյա ֆիզիկական անձի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան փախստականի, հարկադիր տեղահանված անձի կարգավիճակ ստանալու փաստը հաստատող փաստաթղթերը և այլն);

6) ՀՀ տարածք ժամանակավոր տեղափոխված ավտոտրանսպորտային միջոցների դեպքում՝ տրանսպորտային միջոցը ՀՀ տարածք ներմուծելու ժամանակ լրացված ուղևորային մաքսային հայտարարագիրը, որով հաստատվում է ժամանակավոր գտնվելու նպատակով այդ տրանսպորտային միջոցի բացթողման փաստը;

7) անձնական օգտագործման տրանսպորտային միջոցի տիրապետման, օգտագործման և (կամ) տնօրինման իրավունքը հաստատող փաստաթղթերը;

8) կանխիկ դրամական միջոցների և (կամ) դրամական գործիքների ծագումը հավաստող փաստաթղթերը՝ եթե հայտարարագրման օրվա դրությամբ այդ դրամական միջոցները գերազանցում են ուղևորային մաքսային հայտարարագիրը մաքսային մարմին ներկայացնելու օրվա դրությամբ գործող փոխարժեքով 100 հազար ԱՄՆ դոլարին համարժեք գումարը;

9) հայտարարատուի անունից կամ հանձնարարականով գործող անձի լիազորությունները հաստատող լիազորագիրը կամ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում հայտարարատուի անունից հանդես գալու լիազորությունները հաստատող՝ այլ փաստաթուղթ;

10) ՀՀ տարածքից ժամանակավոր արտահանված այնպիսի տրանսպորտային միջոցների հետադարձ ներմուծման դեպքում, որոնք ՀՀ տարածքից դուրս գտնվելու ընթացքում, անհրաժեշտությամբ պայմանավորված, ենթարկվել են տեխնիկական սպասարկման կամ վերանորոգման այնպիսի գործողությունների որի ընթացքում տեղի է ունեցել ՀՀ օրենսդրությանը համաձայն՝ համապատասխան պետական լիազորված մարմիններում հաշվառման (գրանցման) ենթակա տրանսպորտային միջոցների մասերի փոխարինում, պետք է ներկայացվեն այնպիսի փաստաթղթեր, որոնք հնարավորություն կտան նույնականացնելու տրանսպորտային միջոցը կամ տրանսպորտային միջոցի այն մասերը որոնք ենթակա են հայտարարագրման:

Ուշադրություն՝

Այն դեպքում, երբ նշված փաստաթղթերը չեն պարունակում ուղևորային մաքսային հայտարարագրում ներկայացված տեղեկատվությունը հաստատող տեղեկություններ, այդ տեղեկությունները կարող են հաստատվել այլ փաստաթղթերով:

2. Եթե ֆիզիկական անձը անձնական օգտագործման ապրանքները մաքսային սահմանով տեղափոխում է չուղեկցվող ուղեբեռում, կամ ուղեկցվող և չուղեկցվող ուղեբեռում ապա ի՞նչ լրացուցիչ փաստաթղթեր կարող են պահանջվել չուղեկցվող ուղեբեռը հայտարարագրելիս.

Ֆիզիկական անձի կողմից ուղեկցվող ուղեբեռում և չուղեկցվող ուղեբեռում կամ միայն չուղեկցվող ուղեբեռում անձնական օգտագործման ապրանքները Հայաստանի Հանրապետություն տեղափոխելու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության տարածքում չուղեկցվող ուղեբեռում ներմուծվող անձնական օգտագործման ապրանքների մաքսային հայտարարագրման ժամանակ, ի լրումն հայտարարագրման ժամանակ պահանջվող փաստաթղթերի, ներկայացվում է հայտարարագրման ոչ ենթակա անձնական օգտագործման ապրանքների համար՝ Հայաստանի Հանրապետություն ժամանելիս մաքսային մարմնին ներկայացված ուղևորային հայտարարագիրը:

Ուշադրություն

Ժամանման պահին ներկայացված ուղևորային հայտարարագրի բացակայության դեպքում՝ Հայաստանի Հանրապետության տարածք չուղեկցվող ուղեբեռում ներմուծվող անձնական օգտագործման ապրանքները կդիտարկվեն, որպես անձնական օգտագործման ապրանքներն առանց մաքսատուրքերի, հարկերի վճարման ներմուծման թույլատրելի չափաքանակները գերազանցող, և կհարկվեն, եթե ֆիզիկական անձը չապացուցի հակառակը:

3. Ինչպե՞ս և ինչի՞ հիման վրա է հայտարարագրվում անձնական օգտագործման ապրանքների արժեքը.

Անձնական օգտագործման ապրանքների արժեքը հայտարարագրվում է անձնական օգտագործման ապրանքների մաքսային հայտարարագրման ժամանակ ուղևորային մաքսային հայտարարագրում՝ չեկերի, հաշիվների մեջ, հաշվեպիտակների և պիտակների վրա կամ անձնական օգտագործման ապրանքների արժեքի մասին տեղեկություններ պարունակող՝ այդ ապրանքների ձեռքբերման վերաբերյալ այլ փաստաթղթերում նշված արժեքի հիման վրա՝ բացառությամբ՝ միջազգային փոստային առաքանիներով ուղարկվող անձնական օգտագործման ապրանքների, որոնց առնչությամբ որպես ուղևորային մաքսային հայտարարագիր օգտագործվում են Համաշխարհային փոստային միության ակտերով նախատեսված և միջազգային փոստային առաքանիներն ուղեկցող փաստաթղթերը:

4. Անձնական օգտագործման ապրանքների արժեքը հաստատելիս ինչ փաստաթղթեր են ներկայացվում.

Անձնական օգտագործման ապրանքների արժեքը հաստատելու համար ֆիզիկական անձի կողմից ներկայացվում են փաստաթղթերի բնօրինակները, որոնց հիման վրա հայտարարագրվել է անձնական օգտագործման ապրանքների արժեքը, իսկ փոխադրողի կողմից առաքվող անձնական օգտագործման ապրանքների առնչությամբ՝ փաստաթղթերի բնօրինակները կամ պատճենները:

5. Ինչպես է հայտարարագրվում միջազգային փոստային առաքանիներով ուղարկվող անձնական օգտագործման ապրանքների արժեքը.

Միջազգային փոստային առաքանիներով ուղարկվող անձնական օգտագործման ապրանքների արժեքը հայտարարագրվում է Համաշխարհային փոստային միության ակտերով նախատեսված և այդպիսի միջազգային փոստային առաքանիներն ուղեկցող փաստաթղթերում: Ընդ որում, որպես անձնական օգտագործման ապրանքների արժեք, դիտարկվում է միջազգային փոստային առաքանիների հայտարարագրված արժեքը միայն այն դեպքում, երբ այն գերազանցում է Համաշխարհային փոստային միության ակտերով նախատեսված փաստաթղթերում նշված՝ անձնական օգտագործման ապրանքների արժեքը:

6. Անձնական օգտագործման ապրանքների արժեքի մեջ ինչպիսի ծախսեր չեն ներառվում.

Անձնական օգտագործման ապրանքների արժեքի մեջ չեն ներառվում փոխադրման և ապահովագրության հետ կապված ծախսերը:

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

https://www.facebook.com/petekamutner/

https://www.instagram.com/src_armenia

https://twitter.com/petekamutner

http s://www.src.am/am